ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

19 օգոստոսի 2011թ թիվ 63-Ա

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13- 14-Ը ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի1997թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ -728 հրամանագրի 1.6-րդ կետով և համաձայն Տավուշի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2011թ հիմնական միջոցառումների պլանի

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.2011թ հոկտեմբերի 13-14-ը Տավուշի մարզում անցկացնել հրամանատարական շտաբային ուսումնավարժություն <<Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը սողանքների ժամանակ>> թեմայով:

2.ՈՒսումնավարժությանը մասնակից դարձնել

1/ Տավուշի մարզպետարանին
2/Մարզային փրկարարական վարչությունը
3/ ՔՊ մարզային ծառայություններին
4/ Դիլիջան,Հաղարծին, Գոշ, Թեղուտ համայնքներին
5/ 1-ին կանչի փրկարարական ուժերին
6/ «Դիլիջանի հիվանդանոց» ՊՓԲԸ-ին
7/ Հաղարծնի միջնակարգ դպրոցին
8/ Դիլիջանի շին. վերանորոգման վարչությունը
9/«Հաղարծին» ՍՊԸ-ին

ՈՒսումնավարժության պատշաճ մակարդակով նախապատրաստ վելու և անցկացնելու նպատակով հանձնարարել.

3.Մարզային փրկարարական վարչության պետին՝

1/Ճշտել և լրամշակել գործող պլանային փաստաթղթերը
2/ Պատրաստ վիճակի բերել կառավարման կապի և ազդարարման համակարգերը

4.ՔՊ մարզային ծառայությունների պետերին՝ 10-օրյա ժամկետում

1/ Ճշտել և լրամշակել գործող պլանային փաստաթղթերը
2/ Կազմակերպել ծառայությունների համալրումը անձնակազմով ,տեխնիկայով ,գույքով,անցկացնել պարապմունքներ

5. Դիլիջան,Հաղարծին, Գոշ, Թեղուտ համայնքների ղեկավարներին.
1/ Ճշտել և լրամշակել գործող պլանային փաստաթղթերը և տարահանման հանձնաժողովների կազմերը
2/ Կազմակերպել պարապմունքներ համայնքների ազգաբնակչության շրջանում
3/ Տեղերում ստուգել և ճշտել փրկարարական ուժերի հագեցվածությունը անձնակազմով ,գույքով և տեխնիկայով

6.ՈՒսումնավարժությանը մասնակից կազմակերպությունների ղեկավարներին .
1/Պատրաստի վիճակի բերել առաջին կանչի ուժերը,միջոցներն ու տեխնիկան
2/Անցկացնել ուսումնամեթոդական պարապմունքներ անձնակազմերի մասնակցությամբ

7.ՈՒսումնավարժության ընթացքում գործնականորեն իրականացնել
1/Մարզի ՔՊ ղեկավար կազմի ազդարարում և հավաք
2/Մասնակից համայնքների ղեկավար կազմի ազդարարում և հավաք
3/Գործնական աշխատանքներ

8.ՈՒսումնավարժության ղեկավար նշանակել Մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ ,փ/ծ փոխգնդապետ Վ.Հովսեփյանին

9.Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

2011թ. Օգոստոսի 19
ք.Իջևան